



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

32-1
A 198

ՍԵՄԻԿ

ՈՅԱՆՆ ՈՒ ԱՐՋԸ



ՊԵՏՅՐԱՏ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ОСТОПОДЪЯНИИ
Андрейки Навя
СССР

891.995

4-38

ՅԵՐԵՎԱՆ.1931


ՈՂԱՆՆ ՈՒ ԱՐՋԸ

Մի գյուղացի, անունն Ռհան,
խորը գետում, մոտիկ իր տան,
կողով զրած մեծ ու կոլոր,
ձուկ եր վորսում տարին բոլոր:

Մանր ձկներն ինքն եր ուտում,
խոշորները շուկա տանում,
թանգ ու հծան, մինչ իրիկուն,
ծախում եր նա ու գնում տուն:

Բայց թե մի որ առավոտյան,
յերբ վեր կացավ վազեց ձկան,
տեսավ Ռհանն, ո՛հ, ինչ սարսափ,
գետից հանած, զցած ե ափ
իր կողովը, առանց ձկան.
Տվ ե արել,—հետքեր չկան:

Եստեղ-ե՛նտեղ փնտռեց Ռհանն,
մի կողմից ել վորդուն, կնկան
վորքի հանեց—ինչ ե գտնի.
չկա գողը,—տակն ե գետնի:



Դու մի ասիլ՝ արջը բրդոտ,
գյուղի կողքի անտառից մոտ,
գիշերները թագուն գալիս
վողջ ձկները կուլ ե տալիս:
Խեղճ Ռհանը մնաց շվար.
Ի՛նչպես արջի հախիցը գար:

Շատ ման յեկավ գյուղի միջին,
ե՛լ ծանոթի, ե՛լ ամենքին,
հարցրեց, խնդրեց մի հրացան,
վոր են արջին գող, անպիտան,
մի կերպ զարկի սատկացնի
ու ձկների դարդից պրծնի...
չեղավ, չեղավ, Վորտեղ դիպավ,
Ոհան ապերն, — դատարկ յեկավ.
իրենց գյուղում հրացան չկար,
խսկ դրսումն ել, ով գիտի, կմր:

Հուսահատված Ոհանն յեկավ,
գյուղամիջում տրտունջ արավ.

— Ո՛վ ե տեսել եսպիսի բան,
մարդու ապրուստն չոլի գազանն
գիշերները գա ու լափի
ու ենպես ել գնա մարսի...

Ա՛յ ձեզ մատաղ. բա յես մեղը չեմ,
ել յերեսերս ինչո՞վ պահեմ.
շատ եմ խնդրում արեք մի ճար,
ի՞նչպես անեմ, վոր անտերի
ձեռքից պրծնեմ, չմնամ գերի...

Եստեղ փորձված Թաթուլն ստաց.

— Դո՛ւ ինձ լսիր, ապեր Ոհան,
զուր ես փնտռում գենը, հրացան.
արի յես քեզ մի խորհուրդ տամ,
թե վոր չոգնեց, — ուզածդ տամ:

Յես վորսորդ եմ յեղել յերկար,
ման եմ յեկել անտառ ու սար,
եղ արջերին գիտեմ ենպես,
վոնց ասում են հինգ՝ մատիս պես.
ճիշտ ե, նրանք ուժեղ են շատ.
բայց վախկոտ են անհամեմատ.


հանկարծակի վոր «փրխկ» չանես,
հազար լինեն — կփախցնես:

Միայն պետք ե լինես զգուշ,
գետափ գնաս սվիլի ուշ.
առանց վախի ու մեն-մենակ,
Թագուն պառկես թփերի տակ.
ու յերբ արջը շրից հանեց
էբ կողովը և սկսեց
հանգիստ կերպով ձուկը խժռել,
առանց ձայնի, վոնց վոր մեռել,
կմոտենաս կամաց արջին
ու պինդ ձայնով հենց ականջին
դու «փրխկ» կանես: Ել հաշիվդ սու.
կամ կսատկի լեղապատառ,



կամ վախեցած չափազանց խիստ,
կանհետանա. — յեղիր հանգիստ:

Ոհան ապերն ուրախ ենպես,
Թանգազին գանձ գանողի պես,
արագ-արագ գնաց իր տուն
ու սպասեց մինչ իրիկուն:





Յերբ գիշերը վրա հասավ,
Ոհանը ճիշտ այնպես արավ,
ինչպես իրեն թաթուշն ասաց.
ուշ գիշերով գետափ գնաց,
գատարկ ձեռքով ու մեն-մենակ
լավ թագնվեց թփերի տակ:



Արջը յեկավ կես գիշերին,
չորս բոլորը և թփերին
նայեց, տնտղեց, հետո յեկավ,
փնթփնթալով ջուրը մտավ:

Յերբ կողովը լիքը ձկնով,
նա ափ հանեց տնքտնքալով.
Ոհան ապերն կամաց-կամաց,
փորսող տալով, շունչը պահած,
մի կերպ անցավ, ահով-գողով,
արջի բամակն, ու բամբ ձայնով,
հենց ականջին հանկարծակի,

«Ազգային գրադարան»



NL0405515

վոր «փըխկ» չարավ. իր տեսակի
արջը ճչաց ու սրընթաց
դեպի անտառ կորավ, դնաց:

Մեր Ոհանը նոր շունչ առավ.
շալկեց կողովն, իր տուն տալով:



12653

ԳԻՆԸ 30 Կ.

4.10

907

1
2



СЕМИК
ОГАН и МЕДВЕДЬ
ГИЗ ССРА

1930
ЭРИВАНЬ

ՀԱՅԿՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ
ԲՈՒԿՄԱՆԵՐՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԵՏՏՐՈՒՄ N° 162.8

ԳՐԱԴ N° 6401 (P) . ՏԻՐԱԺ 5000

ՊԱՅ. N° 22.50

ՎԻՍՏԱՄԱՆԻ